

ՎԵՐԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ: ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՊԱՐԱՊՔՍԸ

Արման ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. վերազայնացում, Սինգապուր, տնտեսական աճ, ազգային տնտեսություն, պետական քաղաքականություն

Սինգապուրը, լինելով փոքր կղզի պետություն, 20-րդ դարի վերջին տասնամյակների ընթացքում անհավանական զարգացում է ապրել՝ փոքր նավահանգստից դառնալով միջազգային խոշոր կենտրոն: Այն լուծել է զարգացվածության ցածր մակարդակի հետ կապված հիմնական հարցերը և ձևավորել անհրաժեշտ ենթակառուցվածքներ ժամանակակից մրցունակ պետություն դառնալու համար: Սինգապուրի՝ մրցունակ պետություն դառնալու ճանապարհն ուսումնասիրելիս շատ կարևոր է հասկանալ, թե ինչ ազդեցություն ունեցան 21-րդ դարի առաջին տասնամյակում տեղի ունեցած գլոբալ գործընթացները, քանի որ այս ժամանակաշրջանը շատ նշանակալից էր երկրի համար ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական և սոցիալական առումով:

Բազմաթիվ գիտնականներ վերազայնացումը դիտում են որպես ուժ, որը անխուսափելիորեն կբերի ազգային տնտեսությունների թուլացմանը, քայքայմանը կամ նույնիսկ վերացմանը:¹² Նրանք պնդում են, որ վերազայնացման գործընթացը՝ իր տարբեր դրսևորումներով, գնալով ավելի է թուլացնելու ժամանակակից ազգային տնտեսությունների ինքնակառավարման ներկայիս համակարգի դերը: Ինչպես պնդում է Արջուն Ափադուրայը³, այս գործընթացները անհրաժեշտություն են առաջացրել մտածել ազգային տնտեսությունների սահմաններից դուրս՝ ընդգծելով վերազային, ապակենտրոնացված և կոսմոպոլիտ հասարակության դերը:

Ազգի կառուցման նպատակը Սինգապուրում տարասեռ ներգաղթյալ բնակչության համախմբումն էր միասնական ազգային պետության դրոշի ներքո: Կառավարությունը հույս ուներ, որ այս գործընթացի օգնությամբ կստեղծվի միասնական սինգապուրյան ինքնությունը, և որ ուղղակի բնակչությունը կվերածվի ազգի: Սակայն ծագեց մեկ այլ խնդիր. բնակչությունը դառնում էր չափից շատ արևմտամետ և կորցնում իր ասիական ինքնու-

¹ Held, David, 1995. Democracy and the Global Order: From Modern State to Cosmopolitan Government. Cambridge: Polity Press.

² Hall, Stuart, 1991. "The Local and the global: Globalization and Ethnicity", in Anthony D. King (ed.). Culture, globalization and the World-System. London: MacMillan Press Ltd.

³ Appadurai, Arjun. 1996. Modernity at Large: Cultural Dimensions of globalization. Minneapolis: University Minnesota Press.

թյունը: Այս խնդիրը լուծելու համար երկրի կառավարությունը սկսեց կոշտ միջոցներ ձեռնարկել՝ պաշտպանելու Սինգապուրի ասիական ինքնությունը: Նրանք սկսեցին ակտիվորեն առաջ մղել Կոնֆուցիանիզի արժեքները, որպես հակահարված արևմտյան արդիական արժեքներին: 1990-ականների սկզբերին Սինգապուրի կառավարությունը հասկացավ, որ պետք է ընդունի աշխարհն ինչպես իր շրջաններից մեկը: Վերազգային Սինգապուրի ճանապարհը սկսվեց կառավարության կողմից քաղաք-պետության՝ որպես վերազգային գլոբալ կենտրոն, լուրջ առաջնամար և ներկայացմամբ:⁴

Այսպիսով, ինչպես այլ զարգացող երկրների մեծամասնության դեպքում, Սինգապուրի ազգային ինքնության կառուցումը մեծապես կառավարվում էր պետության կողմից, այլ ոչ թե բնակչության մեծամասնության աջակցությամբ: Սինգապուրում գործում են ժամանակակից արևմտյան մոդելի պետությունների առանձնահատկություններից շատերը, սակայն գերիշխող "ժողովրդական շարժում կուսակցությունը" հազվադեպ է վիճարկվում: Այս կուսակցությունը կառավարում է երկիրը սկսած 1959 թվականից և պահում է իր իշխանությանը օրինականությունը՝ շարունակ պնդելով, որ ներկայացնում է ազգի միասնական շահերը: Ամեն 5 տարին մեկ Սինգապուրում տեղի են ունենում ժողովրդավարական ընտրություններ, և "ժողովրդական շարժում կուսակցությունը" շարունակում է պահել իշխանությունը, քանի որ կատարում է իր նախընտրական խոստումները, ապահովում շարունակական տնտեսական աճ և ներդրումներ կատարում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հանրային բնակարանները, կրթությունը, առողջապահությունը և հասարակական անվտանգությունը:

Եթե Սինգապուրի պետական քաղաքականությունը ամփոփենք մեկ արտահայտության մեջ, ապա այն կհնչի հետևյալ կերպ՝ "ընտրանքային վերազգայնացում": Սա իրենից ենթադրում է գիտակցական ջանքերի գործադրում խթանելու համար վերազգայնացման որոշ ձևերի զարգացմանը և խոչընդոտելու մյուսներին: Օրինակ, կառավարությունը մի կողմից խոչընդոտում է տնտեսական վերազգայնացումը համապատասխանեցնելով տեղական ֆինանսական կանոնակարգերը և քաղաքականությունը միջազգային նորմերին, սակայն մյուս կողմից ակտիվորեն պաշտպանում է ասիական "պահպանողական" հասարակությանը արբանյակային հեռուստատեսությունից և նմանատիպ այլ անցանկալի հարմարություններից:⁵ Այսպիսի կայուն տատանումը աշխարհին բաց և միաժամանակ փակ լինելու միջև ստացել է

⁴ Velayutham, Selvaraj. 2007. Responding to Globalization: Nation, Culture and Identity in Singapore. Singapore: Institute of Southeast Asian Studies.

⁵ Terence Chong. 2006, "SINGAPORE: Globalizing on Its Own Terms". Southeast Asian Affairs. Singapore: Institute of Southeast Asian Studies.

Սինգամպուրյան պարադոքս անվանումը: Քաղաք պետությունը համարվում է աշխարհում վերազգայնացման ամենաբարձր մակարդակ ունեցող պետություններից մեկը միգրացիայի, միջազգային ֆինանսների և տեղեկոմունիկացիայի հարցերում, սակայն միաժամանակ լուրջ քննադատության է արժանանում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառույցների կողմից՝ սեփական քաղաքականության կիրառման պատճառով, որի հետևանքով որոշակի քաղաքացիական ազատություններ կրճատվում են: Ընտրանքային վերազգայնացման փորձը արտահայտում է միջազգայնորեն կապակցված լինելու կարիքը ոչ ավելի, քան ազգային գոյատևման համար, ինչպես նաև ավանդույթների և պահպանողականության քողի տակ պահպանելու համար որոշակի գերիշխող շահեր:

Սինգապուրի վերազգայնացման և զարգացման գործում կարևոր դեր ունեն նաև ներգաղթը և **"օտարերկյա տաղանդները"**: Օտարերկրյա տաղանդներին ողջունելու հիմնավորումը կրում է տնտեսական բնույթ, սակայն սոցիալական առումով այն կանոնակարգման խնդիր ունի: Այս հարցը ավելի արտահայտիչ դառավ 1998-1999 թթ. տեղի ունեցած տնտեսական ճգնաժամի ընթացքում: Մինչ կառավարություն շարունակում էր թույլ տալ օտարերկրացիներին ապրել, աշխատել և բնակվել Սինգապուրում, բնիկ սինգապուրցիները ենթարկվում էին կրճատումների և նրանց շրջանում աճում էր դժգոհությունը օտարերկրյա տաղանդների հանդեպ: 2000թ. Ազգային օրվան նվիրված հանրահավաքի ժամանակ վարչապետ Գոհը բարձրացրեց այս հարցը՝ կոչ անելով սինգապուրցիներին փոխել իրենց կարծիքը օտարերկրյա տաղանդների հանդեպ: Նա խնդրեց սինգապուրցիներին ողջունել նրանց, առաջարկել մշտական քաղաքացիություն և ընդունել որպես Սինգապուրի լիիրավ քաղաքացիների բոլոր հնարավոր առիթներով: Կառավարությունը այս ոլորտում փոփոխությունների կարևորությունը նշեց նաև կառավարությանը առընթեր երկու խոշոր կազմակերպությունների ղեկին օտարերկրացիներ նշանակելով: Այդ կազմակերպություններն էին "Սինգապուրի զարգացման բանկը" և "Նեպտուն Օրիենտ Լայնս" ազգային ծովային փոխադրումների ընկերությունը, որը, մինչև քաղականություն մտնելը, նախկինում ղեկավարել էր վարչապետ Գոհը:

Օտարերկյա տաղանդների ներգրավման որոշման հետևանքով առաջացած խնդիրների կառավարումը դարձել է տնտեսական ոլորտի կարևոր մարտահրավերներից մեկը: Վերազգայնացման հետևանքով առաջացած եկամտի մակարդակի անհավասարության և հմտությունների վրա շեշտադրման հարցերը ստիպեցին հմտության սպեկտորի երկու ծայրերում էլ գտնվող սինգապուրցիներին անհանգստանալ իրենց ապագայի համար: Ներքևի ծայրում հարևան երկրներից եկող աշխատուժի ավելի ցածր գինը

ստիպում է առավել արդյունավետ բարելավել հմտությունները: Իսկ վերին ծայրում Սինգապուրի ուղղվածությունը դեպի բարձր արդյունք արտադրող ոլորտներ հանգեցրել է համապատասխան հմտություններ ունեցող մասնագետների պակասին: Լավ կրթված սինգապուրցիները բարձրաձայնում են, որ գտնվում են անբարենպաստ վիճակում բարձր մրցակցային աշխատանքի շուկայում: Մեծաքանակ ներգաղթը մտահոգության առիթ է տալիս նաև Սինգապուրի ազգային և մշակութային ինքնության ձևավորման հարցում:⁶ Սինգապուրի վերազգայնացման բարձր մակարդակ ունեցող տնտեսությունում սոցիալական լարվածության մյուս երկու խնդիրները կապված են կառուցվածքային գործազրկության և եկամտի մակարդակի մեծացող ճեղքի հետ: Վերազգայնացման այս 2 հետևանքները տարածված երևույթ են զարգացող երկրներից շատերում: Ընդունված փաստ է, որ վերազգայնացումից ամենից շատ օգտվում է վերնախավը՝ ստեղծելով եկամտի մակարդակների աճող տարբերություններ նրանց, միջին խավի և հասարակության ամենից քիչ վաստակողների միջև: Սինգապուրի օրինակը կարողացել է խախտել այս միտումը. երկրում տնտեսական աճն ու վերազգայնացումը բարելավել են բնակչության ճնշող մեծամասնության ապրելու պայմանները և ստեղծել գրեթե լրիվ զբաղվածություն: Սակայն, եթե վերազգայնացումը խորացնի երկրում եկամտի մակարդակի միջև տարբերության և գործազրկության աճը, ապա անհրաժեշտ կլինի քաղաքական միջամտություն և համապատասխան քաղաքականության ձևավորում: Եկամտի մակարդակի միջև տարբերության աճին ի պատասխան Սինգապուրի կառավարությունը սկսեց խթանել մերիտոկրատիայի՝ առավել արժանավորների, գաղափարը: Այս գաղափարը դարձավ ֆունդամենտալ ժամանակակից Սինգապուրի կառուցման գործում՝ շեշտելով, որ նրանք, ովքեր շատ են աշխատում, կյանքում առաջ կգնան: Այս շեշտադրման արդյունքում ավելացավ կենտրոնացումը կրթության վրա, որպես վերազգայնացման գործընթացի էական տարր: Սինգապուրը, լինելով 5 տարին մեկ պարբերական ընտրություններ անցկացնող երկիր, ունի կառավարությանը պահանջներ ներկայացնող ընտրազանգված: Սինգապուրի կառավարությունը ձեռնարկել է երկու միջոց՝ կրթական համակարգի բարեփոխումներ ու քայլեր ուղղված գործազրկության ու ընկնող եկամուտների բացասական ազդեցության նվազմանը: Ճգնաժամի տարիներին և դրանցից հետո կառավարությունը ճանաչել է կրթության ոլորտում ֆինանսավորման ավելացման կարևորությունը: Կրթվածության մակարդակի բարձրացման լավագույն մեթոդներից մեկն այսպիսին է՝ բռնել նրանց քանի երիտասարդ են, և քանի դեռ նրանց միտքը չափազանց հավաք չի դարձել: Գործում են

⁶ Koh, A., “Global Flows of Foreign Talent: Identity Anxieties in Singapore’s Ethnoscope”, *Sojourn*, Vol. 18, No. 2 (2003): 235-256.

բազմաթիվ ծրագրեր, որոնք ուղղված են երկրի տարեց բնակչությանը համակարգիչներին ծանոթացնելուն, սակայն ամենամեծ ջանքերը ուղղված են հենց կրթական համակարգին: "Մտածող դպրոցներ, սովորող ազգ": Սինգապուրը կայուն քայլեր է ձեռնարկում համապատասխանեցնելու կրթական համակարգը 21-րդ դարի պահանջներին: 1997թ.-ին կրթության նախարարության կողմից մշակված նախագիծը դպրոցների առջև դնում էր նպատակներ, որոնք ներառում էին ուսումնառություն կյանքի ընթացքում կրեատիվ մտածողության խթանում, բոլոր դպրոցներում ուսուցիչների համար հիմնարար համակարգչային գիտելիքների ուսուցում մինչև 2000թ., դպրոցներում երկուսը մեկին հարաբերակցության ապահովում համակարգիչների և աշակերտների միջև, ինչպես նաև ուսուցման ընդհանուր ժամանակի 30 տոկոսի տրամադրում ՏՏ ոլորտի առարկաների ուսուցմանը մինչև 2002թ.⁷: Մինչ Սինգապուրի տնտեսությունը շարժվում է դեպի բարձրարժեք ապրանքների արտադրություն, եկամուտների միջև ճեղքի մեծացումը դառնում է երկրի գլխավոր քաղաքական մարտահրավերը: Երբ տնտեսությունը տեղաշարժ է կատարում դեպի արդյունաբերական համակարգ, կրթության և վերապատրաստման միջոցով մարդկային կապիտալի կուտակման աստիճանը պետք է համընթաց շարժվի հնտություններ ունեցող աշխատուժի աճող պահանջարկի հետ: Այս գործնաթացը հանգեցնում է բարձր որակի աշխատուժի աշխատավարձի աճին, համեմատած ցածրորակ աշխատուժի հետ և ավելացնում եկամտի մակարդակների ու տեղացի աշխատողների խոցելիությունը գլոբալ տենդենցների հանդեպ: Սա նշանակում է, որ ապագայում միայն կրթությունը չի կարող լուծել եկամտի մակարդակների անհավասարությունը: Սինգապուրին պետք է կլինեն մշակված սոցիալական բարեկեցության համակարգեր՝ հավասարակշռելու տնտեսական աճը և մեծացող տնտեսական ճեղքը:⁸ Ամփոփելով Սինգապուրի փորձը՝ կարելի է եզրահանգել, որ պետական ուղղորդված քաղաքականությունը թույլ է տալիս ինտեգրվել գլոբալ տնտեսական գործ-ընթացներին, նվազեցնելով դրանցից բխող բացասական հետևանքները՝ գործազրկությունն ու եկամուտների ոչ հավասարաչափ բաշխվածությունը: Չնայած Սինգապուրի կառավարության՝ օտարերկրյա տաղանդների ներգրավման ծրագիրը և կրթության ոլորտում կատարվող բարեփոխումները չլուծեցին խնդիրները՝ սակայն երկրում իրականացվեցին լուրջ բարեփոխումներ՝ բոլորին հավասար հնարավորություններով ապահովելու համար:

⁷ Tay, Simon S.C. 2001, "ISLAND IN THE WORLD: Globalization and Singapore's Transformation". Southeast Asian Affairs. Singapore: Institute of Southeast Asian Studies

⁸ Bilveer Singh. 2008, "SINGAPORE: Success at Home, Challenges from Abroad", Southeast Asian Affairs. Singapore: Institute of Southeast Asian Studies

Արման ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վերազգայնացում: Սինգապուրի պարադոքսը

Բանալի բառեր. վերազգայնացում, Սինգապուր, տնտեսական աճ, ազգային տնտեսություն, պետական քաղաքականություն

Ազգային տնտեսությունների համար վերազգայնացումը բերում է ինչպես հնարավորություններ, այնպես էլ ստեղծում է մարտահրավերներ: Սինգապուրը, կղզի-պետություն է, որը 20-րդ դարի վերջին տասնամյակի ընթացքում կարողացել է դառնալ միջազգային կենտրոն: Այս գործընթացը իր հերթին առաջացրեց միգրացիայի աճ տնտեսության բոլոր մակարդակներում, ինչը թույլ տվեց Սինգապուրին դառնալ մրցունակ տնտեսություն: Չնայած Սինգապուրի տնտեսությունը վերելք ապրեց, սակայն քաղաքացիների շրջանում աճեց կառուցվածքային գործազրկության և եկամուտների անհավասարաչափ բաշխվածության մակարդակը:

Arman VARDANYAN

Globalization. Singapore Paradox

Key words: globalization, Singapore, economic growth, nation-state economy, government policy

For nation-states globalization not only brings opportunities, but creates challenges as well. Singapore, an Iceland country, which managed to become a global center during the last decade of the 20th century. This process increased level of migration on all levels of country's economy, which allowed Singapore to become a competitive economy. Though Singapore's economy prospered, level of structural unemployment and increasing income inequality raised among it's citizens.

Арман ВАРДАНИЯН

Глобализация. Сингапурский парадокс

Ключевые слова: глобализация, Сингапур, экономический рост, национальная экономика, государственная политика

Глобализация как открывает возможности для национальных экономик, так и создает для них проблемы. Сингапур является островным государством, который в течение последнего десятилетия 20-го века, стал международным центром. Этот процесс, в свою очередь, привел к росту миграции на всех уровнях экономики, что позволило Сингапуру стать конкурентоспособной экономией. Хотя экономика Сингапура была на подъеме, среди граждан увеличился уровень структурной безработицы и неравномерного распределения доходов. Правительство Сингапура ответило на эту проблему применением государственной политики направленную на обеспечения устойчивого экономического роста и сокращения неравенства.